

**ՀՀ ԿԱ ՊԵԿ 2013Թ. ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

2013թ. պետական բյուջեով սահմանված հարկային եկամուտների ապահովումը հանդիսացել է ՀՀ ԿԱ ՊԵԿ ընթացիկ տարվա հիմնական խնդիրը: ՀՀ ԿԱ ՊԵԿ-ին հաջողվել է ապահովել 2013 թվականի պետական բյուջեով նախատեսված հարկային եկամուտների ցուցանիշը (993 մլրդ դրամ): 2013 թվականին ՀՀ պետական բյուջե մուտքագրվել է ավելի քան 997.2 մլրդ դրամ հարկային եկամուտներ, որը 2012 թվականի նույն ցուցանիշը գերազանցում է 122 մլրդ դրամով կամ 13.9 տոկոսով: Հարկ է նշել, որ նախնական տվյալներով, 2013 թվականին հաջողվեց ապահովել անկախության տարիներից ի վեր հարկեր/ՀՆԱ ցուցանիշի ամենաբարձր մակարդակը՝ շուրջ 23.2 տոկոս:

**I. (84) Հարկային և մաքսային հսկողության արդյունավետության բարձրացում**

**• ՀՀ-ում նոր սերնդի բազմաֆունկցիոնալ ՀԴՄ-ների ներդրում այն ոլորտներում, որտեղ վերջիններիս կիրառումն օրենքով պարտադիր է**

Գործարքների փաստաթղթավորման նկատմամբ կիրառվող հսկողական կարևոր քայլերից էր նոր սերնդի ՀԴՄ-ի ներդրման աշխատանքների կազմակերպումը: 2013թ. հուլիսի 1-ից 500 մլն դրամ և ավելի հասույթ ունեցող հարկ վճարողները սկսեցին կիրառել նոր սերնդի ՀԴՄ-ներ, իսկ 2013թ. դեկտեմբերի 1-ից՝ ԱԱՀ վճարող համարվող հարկ վճարողները: Վերջնական խմբի հարկ վճարողների համար նոր սերնդի ՀԴՄ-ի կիրառման վերջնաժամկետը՝ 2014թ. հուլիսի 1-ն է /ՀՀ կառավարության 05.09.2013թ. թիվ 968-Ն որոշում/:

**• վերլուծական կարողությունների զարգացում՝ ոլորտային ռիսկային գործունեության տեսակների և ապրանքատեսակների բացահայտման և հարկման նպատակով**

Իրականացվել են աշխատանքներ էլեկտրոնային և թղթային հարկային հաշիվների համեմատական վերլուծության, թղթային հաշիվների դուրս գրման ղեկաբերի նվազեցման, դրոշմապիտակներով պարտադիր դրոշմավորման գործընթացի նկատմամբ ընթացիկ հսկողության իրականացման, 2013թ.-ի ընթացքում ներմուծումներ իրականացրած հարկ վճարողների տնտեսական գործունեությունը բնութագրող հիմնական ցուցանիշների վերլուծության և իրականացված չափագրումների արդյունավետության վերլուծության ուղղությամբ:

**• ռիսկային չափանիշների հիման վրա ստուգման ենթակա ԱՏԳ մասնակցի ընտրության համակարգի հետագա կատարելագործման նպատակով սահմանվել են հետբացթողումային հսկողության ռիսկային չափանիշները**

**II. (85) Եկամտային հարկի և կուտակային վճարի անձնավորված հաշվառման համակարգի ներդրում**

**• կենսաթոշակային բարեփոխումների ծրագրի շրջանակներում եկամտային հարկի և կուտակային վճարի անձնավորված հաշվառման ավտոմատ համակարգի գործարկում «Հարկատու 3» էլեկտրոնային կառավարման համակարգում, ծրագրային ներդրումն ապահովող ՊԵԿ ընթացակարգերի սահմանում և իրագործում**

Եկամտային հարկի և կուտակային վճարի անձնավորված հաշվառման համակարգի շահագործմամբ պայմանավորված փոփոխություններ են կատարվել հաշվետվությունների էլեկտրոնային եղանակով ներկայացման համակարգում, «Հարկատու 3» էլեկտրոնային կառավարման համակարգում:

Ավարտվել է «Եկամտային հարկի և պարտադիր կուտակային վճարի անձնավորված հաշվառման համակարգ»-ի «Կուտակային վճար», «Հաշվետվություններ» և «Անհատական հաշվի քաղվածք» մոդուլների ծրագրային ապահովումը: Ավարտվել է ֆիզիկական անձի (տվյալների սուբյեկտի) անհատական հաշվի քաղվածքը ստանալու նպատակով հարկային մարմնի կայքին կից գործող տեղեկատվական պորտալի ծրագրային ապահովման մշակումը:

**• Մշակվել և հրապարակվել են եկամտային հարկի և կուտակային վճարի անձնավորված հաշվառման համակարգի ՊԵԿ ընթացակարգերի վերաբերյալ մեթոդական, ուսուցողական նյութեր և ձեռնարկներ**

**III. (86) Սահմանային անցակետերի արդիականացում՝ ժամանակակից պահանջներին համապատասխանեցման նպատակով**

**• «Բագրատաշեն», «Գոգավան» և «Բավրա» պետական սահմանի անցման կետերի վերակառուցում և եվրոպական չափանիշներին համապատասխանեցում**

ՀՀ պետական սահմանի «Բագրատաշեն», «Բավրա» և «Գոգավան» անցման կետերի արդիականացում՝ ծրագրի շրջանակներում ս.թ. սեպտեմբերի 27-ին ՀՀ Նախագահի ներկայությամբ մեկնարկվել է Բագրատաշենի սահմանային նոր անցակետի վերակառուցման աշխատանքները, նախատեսվում է անցակետերը համալրել ավտոմեքենաների որոնման և վերահսկման համակարգերով, ինչպես նաև կիրառել «Մեկ պատուհան» սկզբունքը:

- **պետական սահմանում մաքսային ընթացակարգերի ավտոմատացում՝ էլեկտրոնային տեխնոլոգիական համակարգի կիրառմամբ**

- **միջազգային և ԵՄ-ի չափանիշների ու արդյունավետ փորձի ուսումնասիրության հիման վրա պետական սահմանի անցակետերում «մեկ կանգառ, մեկ պատուհան» սկզբունքի ներդրում՝ բացառելով գործառույթների կրկնությունները, ոչ անհրաժեշտ կամ կրկնակի վերահսկողության կամ հսկողության իրականացումը**

ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից ներդրվել է ՀՀ ում դեղերի ներմուծման հավաստագրերի տրամադրման Մեկ պատուհան պորտալը և ս.թ. նոյեմբերի 1-ից ՀՀ ներմուծվող դեղերի և դեղանյութերի ներմուծման հավաստագրերը մշակվում և տրամադրվում են բացառապես էլեկտրոնային եղանակով: ՊԵԿ-ի կողմից մշակվել և ներկայումս համաձայնեցման փուլում է գտնվում սննդի անվտանգության պետական ծառայության հետ իրենց վերահսկողության ներքո գտնվող ապրանքների համար «մեկ կանգառ, մեկ պատուհան» համակարգի ֆունկցիոնալ նկարագրությունը: Աշխատանքներ են տարվել ՀՀ-ում «մեկ կանգառ, մեկ պատուհան» սկզբունքի ներդրման հայեցակարգի, նախագծի, բիզնես գործընթացների նկարագրության, տեխնիկական առաջադրանքների մշակման ուղղությամբ:

- IV. (87) **Մաքսային արժեքի որոշման և մաքսային ձևակերպումների գործընթացի համապատասխանեցում եվրոպական չափանիշներին**

- V. (88) **Հարկ վճարողների սպասարկման որակի բարձրացում և հարկային ու մաքսային մարմինների տեխնիկական ապահովվածության մակարդակի բարելավում, որով հարկման հարաբերություններում կընդլայնվեն ինքնազնահատման համակարգի կիրառման մոտեցումները**

- **հարկ վճարողների սպասարկման նոր կենտրոնների և կետերի գործարկում**

Ս.թ. շահագործման են հանձնվել երեք հարկային տեսչությունների շենքերը և հարկ վճարողների սպասարկման չորս սրահները: 18.07.2013թ.-ին ՊԵԿ-ը «Հայփոստ» ընկերության հետ կնքել է համաձայնագիր՝ ազգային փոստային օպերատորի բաժանմունքներում ՀՎՍ կետեր բացելու վերաբերյալ: Համաձայնագրի հիման վրա ՊԵԿ-ը ս/թ երեք հերթերով արդեն իսկ գործարկել է շուրջ 40 նման սպասարկման կետեր տարբեր փոստային բաժանմունքներում՝ ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում:

- **ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ուսումնական կենտրոնի հագեցում ժամանակակից, համակարգչային սարքավորումներով**

ՀՀ ԿԱ ՊԵԿ ուսումնական կենտրոնը համալրվել է տեսաձայնագրող սարքերի համակարգով և ուսումնական պրոցեսի ապահովման այլ սարքավորումներով (պրոյեկտոր, գունավոր տախտակ սարք)

- **էլեկտրոնային հաշվետվության համակարգի համատարած կիրառման համար պայմանների ապահովում, այդ թվում՝ նոր հարկային հաշվետվական տեսակների ավտոմատացում**

Շարունակվել են աշխատանքները օրենսդրական վերջին փոփոխություններով պայմանավորված հաշվետվական ձևերում կատարվող փոփոխությունները ծրագրավորելու ուղղությամբ: Ներկայումս «էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման» համակարգում ներդրված են 74 հաշվետվածաձևատեսակներ:

- **ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեում ՏՏ-ի ենթակառուցվածքի զարգացում՝ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության, տվյալների մշակման և վերլուծության անխափան ընթացքը և նոր մոդուլներով «Հարկատու 3» համակարգի համալրումն ապահովելու նպատակով**

- **հարկային և մաքսային մարմինների կողմից հարկ վճարողներին մատուցվող էլեկտրոնային ծառայությունների տեսակների և ծավալների ավելացում**

Էլեկտրոնային եղանակով հաշվետվություններ ներկայացնող հարկ վճարողների թվաքանակը գերազանցել է 52.000:

Էլեկտրոնային հիշեցում-ծանուցումների ցանկերի ստեղծման, կառավարման, որոնման, տպագրման և արտածման ենթահամակարգերը ներդրված են: Հարկային հաշիվների համադրման արդյունքում ուղարկվել է 49574 էլեկտրոնային ծանուցում:

Գործում է առաքվող, տեղափոխվող արտադրանքի, ապրանքի գրքերի վարման էլեկտրոնային տարբերակը: 2014թ. հունվարի 1-ից հարկ վճարողները կարող են էլեկտրոնային եղանակով դուրս գրել առաքվող կամ տեղափոխվող արտադրանքները, ապրանքներն ուղեկցող հաշվարկային փաստաթղթեր: